



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ  
**ՀՐԱՄԱՆ**

N 59-Ա/2

«29» հունվարի, 2020 թվական

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ  
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Եվրոպական հետազոտական տարածքում Հայաստանի Հանրապետության հետազոտությունների և մշակումների բնագավառի ինտեգրման ճանապարհային քարտեզը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

ՆԱԽԱՐԱՐ

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ

#### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպական հետազոտական տարածքում (այսուհետ՝ ԵՀՏ) Հայաստանի Հանրապետության հետազոտությունների և մշակումների (այսուհետ՝ ՀևՄ) բնագավառի ինտեգրման ճանապարհային քարտեզը (այսուհետ՝ ԵՀՏ-ՀՀ ճանապարհային քարտեզ) ԵՀՏ գերակայությունների շրջանակներում ազգային գիտահետազոտական համակարգի հիմնական նպատակների, դրանց ձեռքբերմանն ուղղված միջոցառումների և այդ միջոցառումների ներդրման արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների ամբողջություն է:


2. ԵՀՏ-ՀՀ ճանապարհային քարտեզը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագիրը», 2015 թվականին Արևելյան գործընկերության ԻնկոՆետ և Եվրոպական Միության 7-րդ շրջանակային ծրագրի շրջանակներում ստեղծված միջազգային փորձագիտական խմբի կողմից հրապարակված Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների ոլորտի համապարփակ գնահատման մասին զեկույցը, 2009 թվականին մեկնարկած Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱԷԳ) համատեղ քաղաքականության նախաձեռնության շրջանակներում պատրաստված «20 թիրախային արդյունք մինչև 2020 թվականը» մոնիթորինգային փաստաթուղթը, ինչպես նաև ԵՄ «Հորիզոն-2020» ծրագրի քաղաքականության աջակցության գործիքակազմի շրջանակներում ՀՀ զեկույցի միջանկյալ եզրակացությունները:

#### II. ՀՀ ՀևՄ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Ներկայումս ՀՀ ՀևՄ բնագավառի պետական ծրագրերը և թեմաները կատարվում են

ընդհանուր թվով 77 գիտական կազմակերպություններում և բուհերում, որոնցից 34-ը ներկայացնում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, 21-ը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այդ թվում՝ 12 համալսարան), 6-ը՝ ՀՀ առողջապահության նախարարությունը, 3-ը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, 2-ը՝ Երևանի քաղաքապետարանը, 1-ական՝ ՀՀ էկոնոմիկայի, պաշտպանության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, ՀՀ վարչապետի աշխատակազմը և 7-ը՝ մասնավոր հատվածը:

4. 2018 թվականի դեկտեմբերի դրությամբ պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված են 6056 աշխատողներ, որոնցից 3950-ը գիտաշխատողներ են, 2572-ը ունեն գիտական աստիճան, որոնցից 34.5%-ի տարիքը 65 և բարձր է (տես, Գծապատկեր 1): Գիտության ոլորտում ներգրավված աշխատողների 50.8%-ը, գիտաշխատողների 49.5%-ը, իսկ գիտական աստիճան ունեցողների 39.5%-ը կանայք են: Ներկայումս, պետական բյուջեի ֆինանսավորման մեջ ընդգրկված գիտական կազմակերպությունների տնօրենների և բուհերի ղեկավարների 15.6%-ը ու դրանց գիտական միավորների ղեկավարների 30.6%-ը նույնպես կանայք են:




Գծապատկեր 1: 2018 թվականի դեկտեմբերի դրությամբ գիտական պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների տարիքային բաշխումը:

5. Գիտության պետական ֆինանսավորման ծավալները վերջին տարիներին եղել է 14-15 մլրդ ՀՀ դրամ, ինչը կազմում է ՀՆԱ-ի 0.25%-0.28%-ը: Այդ ֆինանսավորման շուրջ 70%-ը հատկացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային

ֆինանսավորման ծրագրերին, մոտ 13%-ը՝ նպատակային ծրագրերին, 11%-ը՝ պայմանագրային (թեմատիկ) դրամաշնորհներին և մոտ 6%-ը հատկացվում է պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողներին հավելավճարի տրամադրման համար:

6. 2014-2018 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային առաջատար Վեբ օֆ Սայնս («Web of Science») գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական հանդեսներում հրապարակվել է ընդհանուրը 5397 հոդված, որից 4410-ը՝ բնական գիտությունների (ֆիզիկա և աստղաֆիզիկա՝ 2920, մնացածը՝ այլ մասնագիտություններ), 822-ը՝ ճարտարագիտության և տեխնոլոգիաների (այդ թվում՝ գիտափորձերի նկարագրություններ), 724-ը՝ բժշկագիտության, 174-ը՝ հասարակական, 106-ը՝ հումանիտար և 55-ը՝ գյուղատնտեսական գիտությունների բնագավառներում՝ ըստ Վեբ օֆ Սայնս («Web of Science»)-ի ԻնՍայտես («InCites») շտեմարանի տվյալների (տես, Գծապատկեր 2): Պետք է նշել, որ որոշ դեպքերում, միևնույն հոդվածը կարող է հաշվառվել տարբեր բնագավառներում («Subject»), եթե այն պարունակում է տարբեր մասնագիտություններին համապատասխանող հետազոտությունների տարրեր: ՀՀ գիտական հրապարակումների 55-60%-ը կատարվել է միջազգային համագործակցության շրջանակներում, այսինքն այդ աշխատանքների հեղինակների մեջ առկա է առնվազն մեկ օտարերկրյա գիտնական:



Գծապատկեր 2: Վեբ օֆ Սայնս («Web of Science») շտեմարանում ընդգրկված ամսագրերում ՀՀ գիտական հրապարակումները՝ ըստ գիտության բնագավառների (2014-2018 թվականներ):

7. ՀՀ ՀևՄ բնագավառի հիմնական խնդիրներն են՝

- 1) պետական ֆինանսավորման անբավարար մակարդակը և դրա մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության ցածր մակարդակը,
- 2) գիտաշխատողների բարձր տարիքային կազմը և շարունակվող «ուղեղների արտահոսքը», գիտական կադրերի պատրաստման համակարգի ոչ բավարար արդյունավետությունը,
- 3) գիտական ենթակառուցվածքների ճնշող մեծամասնության անհամապատասխանությունը արդի չափանիշներին,
- 4) կիրառական հետազոտությունների ցածր մասնաբաժինն ընդհանուրի մեջ,
- 5) գիտություն-արտադրություն թույլ կապերը, տնտեսության կողմից պատվիրվող հետազոտությունների անբավարար թվաքանակը,
- 6) կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի բացակայությունը,
- 7) գիտության հասարակական վարկանիշի ցածր մակարդակը:

### III. ԵՎՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՀևՄ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. ԵՎՏ գերակայություններն են (տե՛ս [https://ec.europa.eu/info/research-and-innovation/strategy/era\\_en](https://ec.europa.eu/info/research-and-innovation/strategy/era_en)).

- 1) արդյունավետ ազգային հետազոտական համակարգ,
- 2) միջազգային օպտիմալ համագործակցություն և մրցակցություն (համընդհանուր մարտահրավերների համատեղ լուծումներ և արդյունավետ ներդրում գիտական ենթակառուցվածքների մեջ),
- 3) բաց աշխատաշուկա հետազոտողների համար,
- 4) գենդերային հավասարություն գիտահետազոտական գործունեության բնագավառում,
- 5) գիտելիքի օպտիմալ շրջանառություն, մատչելիություն և փոխանցում,
- 6) միջազգային համագործակցություն:

9. ԵՎՏ գերակայությունների շրջանակներում ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի հիմնական նպատակները, դրանց ձեռքբերման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները և այդ միջոցառումների ներդրման արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշները հետևյալներն են՝

**ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1: ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

<p><b>Նպատակ 1.</b></p>	<p><b>Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտահետազոտական գործունեության պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մոդելի ներդրում:</b></p>
<p>Միջոցառումներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական գործունեության արդյունավետության գնահատում:</li> <li>2. Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների տարակարգում ըստ գիտական գործունեության արդյունավետության:</li> <li>3. Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական գործունեության պետական ֆինանսավորման ծավալների համապատասխանեցում դրանց գիտական գործունեության արդյունավետությանը:</li> </ol>
<p>Գնահատման ցուցանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների առկայություն ըստ՝             <ol style="list-style-type: none"> <li>1) Գիտական պարբերականներում ունեցած հրապարակումների գիտաչափական գնահատականի,</li> <li>2) կադրային ներուժի,</li> <li>3) գիտական ենթակառուցվածքների,</li> <li>4) միջազգային գիտակրթական տարածքում ինտեգրման,</li> <li>5) հանրապետական գիտակրթական տարածքում ինտեգրման,</li> <li>6) գիտական արդյունքի առևտրայնացման,</li> <li>7) ֆինանսական արդյունավետության:</li> </ol> </li> <li>2. Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների տարակարգերի առկայություն (4 տարակարգ՝ 1-ին տարակարգի դեպքում գործունեությունն իրականացվում է գիտության արդի չափանիշներին համապատասխան կամ մոտ է դրանց, իսկ 4-րդի դեպքում՝ գործունեությունն իրականացվում է ցածր արդյունավետությամբ և բացակայում է զարգացման որևէ հեռանկար):</li> <li>3. Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական գործունեության պետական ֆինանսավորման մեխանիզմների առկայություն՝ ըստ տարակարգի:</li> </ol>
<p><b>Նպատակ 2.</b></p>	<p><b>Գիտություն-կրթություն կապի ամրապնդում:</b></p>
<p>Միջոցառումներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտական կամ գիտակրթական գերազանցության կենտրոնների ստեղծում, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ համատեղ:</li> <li>2. Գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի միջև գիտակրթական կլաստերների ձևավորում:</li> <li>3. Գիտակրթական կլաստերներում մագիստրատուրայի ուսանողների, ասպիրանտների, պրոֆեսորադասախոսական կազմի և գիտաշխատողների շարժունության մեխանիզմների ներդրում:</li> </ol>
<p>Գնահատման ցուցանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Համատեղ գիտական կամ գիտակրթական կենտրոնների կամ ստորաբաժանումների, միջազգային կազմակերպությունների մասնաճյուղերի, տարածաշրջանային հանգույցների քանակ:</li> <li>2. Գիտակրթական կլաստերների առկայություն:</li> <li>3. Մագիստրատուրայի ուսանողների, ասպիրանտների,</li> </ol>

	պրոֆեսորադասախոսական կազմի և գիտաշխատողների ներքին շարժունության մեխանիզմներ:
<b>Նպատակ 3.</b>	<b>Գիտություն-տնտեսություն կապի ամրապնդում, պահանջարկի վրա հիմնված հետազոտությունների մեխանիզմների ներդրում:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտության բնագավառում հանրային-մասնավոր համագործակցության խթանման մեխանիզմների ներդրում:</li> <li>2. Կիրառական բնույթի, այդ թվում՝ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում՝ մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով:</li> <li>3. Պահանջարկով պայմանավորված հետազոտական ծրագրերի իրականացման մեխանիզմների առկայություն:</li> <li>4. Հայաստանի Հանրապետության համար «խելացի մասնագիտացման» ռազմավարության մշակում ԵՄ համապատասխան կառույցների խորհրդատվական աջակցությամբ:</li> </ol>
Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտական գործունեության իրականացման համար հարկային և մաքսային արտոնությունների տրամադրման մեխանիզմներ:</li> <li>2. Տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման ծրագրեր:</li> <li>3. Տնտեսության կարիքների ուսումնասիրության և պատվերների ձևավորման մեխանիզմներ, տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների իրականացնող կազմակերպությունների ցանցերի ձևավորում:</li> <li>4. Պահանջարկով պայմանավորված հետազոտական ծրագրերի իրականացման պետական խրախուսման մեխանիզմների մշակում:</li> <li>5. ՀՀ համար «խելացի մասնագիտացման» ռազմավարության և ներդրում ժամանակային քարտեզի առկայություն՝ ԵՄ համապատասխան կառույցների ֆինանսական աջակցությամբ:</li> </ol>
<b>Նպատակ 4.</b>	<b>Գիտական գործունեության բնագավառի ֆինանսական ծավալների ավելացում:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտության ֆինանսավորման ծավալների ավելացում և ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիայի ապահովում:</li> <li>2. Գիտության պետական ֆինանսավորման մեջ մրցութային ֆինանսավորման ձևի մասնաբաժնի ավելացում:</li> <li>3. ԵՄ «Հորիզոն-2020» և վերջինիս հաջորդող շրջանակային ծրագրերի մասնակցության արդյունավետության բարձրացման աջակցություն:</li> <li>4. Գիտաշխատողների աշխատանքային և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:</li> </ol>
Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>1. ՀևՄ բնագավառի ընդհանուր ֆինանսավորման մասնաբաժին ՀՆԱ-ի մեջ:</li> <li>2. Տնտեսության մասնավոր հատվածի կողմից ՀևՄ բնագավառի ֆինանսավորման մասնաբաժին ՀՆԱ-ի մեջ:</li> <li>3. Գիտության պետական ֆինանսավորման մեջ ինստիտուցիոնալ և մրցութային ֆինանսավորման ձևերի հարաբերակցության 60%:40% մակարդակի ձեռքբերում: Գիտական գործունեության մեջ ներգրավված տարբեր տարիքային խմբերի համար մրցութային ծրագրերի հավասար հասանելիության ապահովում:</li> <li>4. ԵՄ «Հորիզոն-2020» ծրագրի մասնակցության աջակցության մեխանիզմների առկայություն:</li> <li>5. Գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի աճի հստակ մեխանիզմների առկայություն, այդ թվում՝ ասպիրանտ, հետդոկտորանտ,</li> </ol>

	<p>գիտական աշխատող տարակարգերով շղթայի ներգրավումով:</p> <p>6. Գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի տարբեր աստիճաններին համապատասխանող ֆինանսական ապահովվածության առկայություն:</p>
<p><b>ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՊՏԻՄԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b></p>	
<p><b>Նպատակ 1.</b></p>	<p><b>Մասնակցություն համընդհանուր մարտահրավերների համատեղ լուծումներին:</b></p>
<p>Միջոցառումներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտական հետազոտությունների ոլորտի ազգային ռազմավարությունների և առաջնահերթությունների համապատասխանեցում ԵՄ Համատեղ ծրագրավորման նախաձեռնությունների և ռազմավարությունների հետ:</li> <li>2. Համատեղ ծրագրավորման որոշակի նախաձեռնություններին Հայաստանի Հանրապետության մասնակցության որոշման կանխատեսումային ուսումնասիրությունների իրականացում:</li> </ol>
<p>Գնահատման ցուցանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտության պետական ֆինանսավորման ծավալների մեջ ԵՄ և ԱԳ երկրների հետ երկկողմ և բազմակողմ ծրագրերի իրականացման հատկացումների մասնաբաժին:</li> <li>2. ՀՀ մասնակցությամբ Համատեղ ծրագրավորման նախաձեռնությունների քանակ:</li> </ol>
<p><b>Նպատակ 2.</b></p>	<p><b>Ժամանակակից գիտական ենթակառուցվածքների և էլեկտրոնային ենթակառուցվածքների զարգացման ռազմավարության մշակում:</b></p>
<p>Միջոցառումներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ազգային գիտական ենթակառուցվածքների արդի վիճակի գնահատում և զարգացման ճանապարհային քարտեզի մշակում:</li> <li>2. Ազգային գիտական ենթակառուցվածքների և էլեկտրոնային ենթակառուցվածքների արդիականացում, ենթակառուցվածքների արդիականացման և(կամ) համատեղ օգտագործման կենտրոնների ենթակառուցվածքների ստեղծման մրցույթների իրականացում, ազգային գիտական ենթակառուցվածքների օգտագործման մատչելիության ապահովում հետազոտողների համար:</li> <li>3. ԵՄ և ԱԳ երկրների հետազոտողների համար ազգային գիտական ենթակառուցվածքների և էլեկտրոնային ենթակառուցվածքների մատչելիության մեխանիզմների մշակում և ներդրում:</li> <li>4. Եվրոպական գիտական ենթակառուցվածքների և էլեկտրոնային ենթակառուցվածքների քարտեզում հայաստանյան ենթակառուցվածքների ընդգրկման մեխանիզմների մշակում և ներդրում:</li> </ol>
<p>Գնահատման ցուցանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ազգային գիտական ենթակառուցվածքների զարգացման ճանապարհային քարտեզի առկայություն:</li> <li>2. Գիտական ենթակառուցվածքների արդիականացման մրցույթներով ձեռքբերված խոշորամասշտաբ սարքավորումների քանակ:</li> <li>3. Մինչև 2023 թվականը Համատեղ օգտագործման գիտական ենթակառուցվածքների քանակ՝ 7 միջգիտակարգային կենտրոն:</li> <li>4. ԵՄ և ԱԳ երկրների հետազոտողների համար մատչելի ազգային գիտական ենթակառուցվածքների քանակ:</li> <li>5. Եվրոպական գիտական ենթակառուցվածքների և էլեկտրոնային ենթակառուցվածքների շարքում հայաստանյան ենթակառուցվածքների քանակ:</li> </ol>



**ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3: ԲԱՑ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

<p><b>Նպատակ 1.</b></p>	<p><b>Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրի իրականացում:</b></p>
<p>Միջոցառումներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման կազմակերպչական և կառուցվածքային պայմանների ստեղծում:</li> <li>2. Ասպիրանտների ճանաչում որպես մասնագիտորեն գիտական հետազոտություններ իրականացնող անձ:</li> <li>3. Հետդոկտորանտուրայի ինստիտուտի ներդրում՝ գիտական աստիճանը ստանալուց հետո 5 տարվա ընթացքում հետդոկտորանտի կազավիճակի տրամադրում՝ երկու տարի ժամկետով և մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ:</li> <li>4. Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական աշխատողների անհատական խրախուսման ծրագրերի իրականացում:</li> <li>5. Տարբեր տարիքային խմբերի գիտաաշխատողների համար դրամաշնորհային մրցույթների կազմակերպում՝ հիմնական հետազոտողի հետևյալ սահմանափակումների դեպքում՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության և գիտական աստիճան ստանալուց 2-7, 7-12 տարի հետո, ինչպես նաև վերջին 10 տարիների գիտական գործունեության արդյունավետության հիման վրա:</li> </ol>
<p>Գնահատման ցուցանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիր:</li> <li>2. Ասպիրանտների կրթաթոշակի բարձրացում, աշխատանքային պայմանների բարելավում:</li> <li>3. Հետդոկտորանտի տարակարգի ներմուծում գիտական աշխատողների տարակարգերի մեջ:</li> <li>4. Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաաշխատողների անհատական խրախուսման ծրագրերի առկայություն:</li> <li>5. Տարբեր տարիքային խմբերի գիտական աշխատողների համար մրցույթային դրամաշնորհային հետազոտական ծրագրերի քանակ:</li> </ol>
<p><b>Նպատակ 2.</b></p>	<p><b>Օտարերկրյա մասնագետների ներգրավում, հայաստանյան գիտնականների շարժունության ապահովում:</b></p>
<p>Միջոցառումներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Դրամաշնորհային մրցույթային ծրագրերին օտարերկրյա մասնագետների մասնակցության ապահովում:</li> <li>2. Օտարերկրյա գիտական և(կամ) գիտակրթական կադրերի վերաինտեգրման ծրագրերի մշակում և իրականացում:</li> <li>3. Գիտաաշխատողների և պրոֆեսորադասախոսական կազմի ներքին (ներպետական) շարժունության ծրագրի մշակում և իրականացում:</li> <li>4. Գիտական աշխատողների կենսաթոշակային պայմանների բարելավման մեխանիզմների մշակում և ներդրում:</li> </ol>
<p>Գնահատման ցուցանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Դրամաշնորհային մրցույթային ծրագրեր իրականացնող հետազոտական խմբերում օտարերկրյա մասնագետների թվաքանակ:</li> <li>2. Վերաինտեգրման դրամաշնորհային ծրագրերի քանակ:</li> <li>3. Ներպետական շարժունության մեխանիզմների առկայություն՝ գիտակրթական կլաստերների շրջանակներում:</li> <li>4. Գիտական աստիճան ունեցող աշխատողներին կենսաթոշակին լրացուցիչ դրամական վճարի ավելացում՝ գիտական աշխատողի աշխատանքային անհրաժեշտ ստաժի առկայության դեպքում:</li> </ol>

<b>ՆՊԱՏԱԿ 3.</b>	<b>ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ԶԲԱՂԵՑՄԱՆ ԲԱՑ, ԹԱՓԱՆՑԻԿ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի մոդելի մշակում և ներդրում:</li> <li>2. Գիտական և պրոֆեսորադասախոսական կազմի կարիերայի զարգացման կատարողականի վրա հիմնված գնահատման համակարգի ներդրում՝ հաշվի առնելով շարժունության բոլոր ձևերը:</li> <li>3. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեությամբ զբաղվելու և գիտական աշխատողների դասախոսական գործունեությամբ զբաղվելու ֆինանսավորման մոդելի ներդրում՝ հաշվի առնելով ներպետական շարժունությունը բուհերի և գիտական կազմակերպությունների միջև:</li> </ol>
Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի մոդելի առկայություն՝ սահմանելով կարիերայի աճի՝ ասպիրանտ, հետդոկտորանտ և տարբեր տարակարգերի գիտական աշխատողի կարիերայի փուլերը՝ սահմանափակելով վարչական պաշտոնների զբաղեցման ժամկետները, խրախուսելով աշխատանքային շարժունությունը և երիտասարդ գիտաշխատողների համար ստեղծելով մոտիվացիա հետազոտողի աշխատանքային կարիերան ընտրելու հարցում:</li> <li>2. Գիտական և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության կատարողականի վրա հիմնված գնահատման մեխանիզմների առկայություն:</li> <li>3. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեությամբ զբաղվելու և գիտական աշխատողների դասախոսական գործունեությամբ զբաղվելու ֆինասավորման մեխանիզմի առկայություն:</li> </ol>
<b>ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 4: ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ:</b>	
<b>Նպատակ 1.</b>	<b>Գիտության ոլորտում գերդերային անհավասարության նվազեցում:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Բնական գիտությունների և ճարտարագիտության բնագավառներում կանանց թվաքանակի ավելացում՝ ընդհանուր գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների մեջ:</li> <li>2. Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների մեջ կանանց թվաքանակի ավելացում:</li> </ol>
Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Կանանց մասնաբաժինը բնական գիտությունների և ճարտարագիտության բնագավառների գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների ընդհանուր թվաքանակի մեջ:</li> <li>2. Կանանց մասնաբաժինը պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների ընդհանուր թվաքանակի մեջ:</li> </ol>
<b>Նպատակ 2.</b>	<b>Գիտության ոլորտում որոշումների կայացման լիազորություններ ապահովող պաշտոններում կանանց թվաքանակի ավելացում:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Գիտական կազմակերպությունների և բուհերի դրանց գիտական ստորաբաժանումների/միավորների կառավարման մեջ կանանց թվաքանակի ավելացում:</li> </ol>

Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>Կանանց մասնաբաժինը գիտական կազմակերպությունների և բուհերի ու դրանց գիտական ստորաբաժանումների կամ այլ միավորների ղեկավարների մեջ:</li> <li>Կանանց մասնաբաժինը դրամաշնորհային մրցութային ծրագրեր իրականացնող գիտահետազոտական խմբերի ղեկավարների մեջ:</li> </ol>
<b>ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 5: ԳԻՏԵԼԻՔԻ ՕՊՏԻՄԱԼ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ:</b>	
<b>Նպատակ 1.</b>	<b>Գիտական հրապարակումների և տվյալների բաց մատչելիության խթանում:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>Գիտական արդյունքների բաց հասանելիություն ապահովման էլեկտրոնային ենթակառուցվածքների ձևավորում:</li> <li>ՀՀ գիտական ամսագրերը բաց մատչելիության ամսագրերի վերափոխելու խթանման մեխանիզմների մշակում և ներդրում:</li> <li>Գիտական, տեխնոլոգիական և նորարարական գործունեության տեղեկատվական-վերլուծական աջակցության ներպետական համակարգի ձևավորում:</li> <li>Բաց մատչելիության ամսագրերում հրապարակումների խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում:</li> <li>Բաց գիտության եվրոպական ամպի («European Open Science Cloud») ձևավորման մասնակցություն:</li> </ol>
Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>ՀՀ գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական արդյունքների բաց մատչելիության պահոցների մասնաբաժինն ընդհանուրի մեջ:</li> <li>ՀՀ գիտական ամսագրերի մեջ բաց մատչելիության ամսագրերի մասնաբաժինն ընդհանուրի մեջ:</li> <li>Գիտատեխնոլոգիական և նորարարական տեղեկատվական-վերլուծական աջակցության համակարգում ընդգրկված գիտական կազմակերպությունների և բուհերի քանակ:</li> <li>Բաց մատչելիության ամսագրերում հրապարակումների մասնաբաժինն ընդհանուր հրապարակումների մեջ:</li> <li>Բաց գիտության և Բաց նորարարությունների օրակարգի («Open Science and Open Innovation Agenda») ներդրման ուղղությամբ ԵՄ անդամ և ԱԳԳ երկրների հետ համատեղ գործողությունների քանակ:</li> </ol>
<b>Նպատակ 2.</b>	<b>Գիտելիքների փոխանցման և բաց ինովացիաների զարգացման աջակցություն:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>ՀՀ գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների զերակայությունների համապատասխանեցում ԵՄ միտումներին:</li> <li>ՀՀ գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների զերակայությունների շրջանակներում բաց նորարարական էկոհամակարգերի («Open Innovation Ecosystem») ստեղծման աջակցություն:</li> <li>Գիտության պետական բյուջեի շրջանակներում տնտեսության մասնավոր հատվածի հետ նորարարական ծրագրերի իրականացում՝ համաֆինանսավորման սկզբունքով:</li> <li>Գիտելիքների փոխանցման կենտրոնների ցանցի ձևավորում:</li> <li>Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտելիքների փոխանցման կենտրոնների գործունեության արդյունավետության գնահատման</li> </ol>

	մեխանիզմների մշակում:
Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>1. ՀՀ գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների զերակայությունները ԵՄ միտումներին համապատասխանեցնելու ծրագրի առկայություն:</li> <li>2. Բաց նորարարական էկոհամակարգերին մասնակցող գիտական կազմակերպությունների և բուհերի քանակ, գիտական կազմակերպությունների և բուհերի հետ համագործակցող ընկերությունների քանակ:</li> <li>3. Տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող նորարարական ծրագրերի քանակ:</li> <li>4. Գիտելիքների փոխանցման կենտրոնների ցանցի առկայություն:</li> <li>5. Գիտելիքների փոխանցման կենտրոնների գործունեության արդյունավետության գնահատման չափանիշների առկայություն:</li> </ol>
<b>ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 6: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ:</b>	
<b>Նպատակ 1.</b>	<b>ՀՀ գիտական հետազոտությունների, մշակումների և նորարարությունների միջազգայնացում երկկողմ համագործակցության մակարդակում:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Երկկողմ հետազոտական և տեխնոլոգիական ծրագրերի իրականացում:</li> <li>2. Համատեղ կենտրոնների կամ միջազգային կազմակերպությունների մասնաճյուղերի ստեղծում ՀՀ-ում:</li> <li>3. Գիտական կազմակերպությունների, բուհերի և անհատ գիտնականների միջազգային համագործակցային գործունեության աջակցություն:</li> <li>4. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող դրամաշնորհային մրցութային ծրագրերում օտարերկրյա գիտնականների մասնակցության խրախուսում:</li> <li>5. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող դրամաշնորհային մրցութային ծրագրերին ներկայացված հայտերի փորձաքննության նպատակով միջազգային փորձագետների ընդգրկում:</li> </ol>
Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Երկկողմ միջազգային հետազոտական և տեխնոլոգիական ծրագրերի քանակ:</li> <li>2. Համատեղ կենտրոնների կամ միջազգային կազմակերպությունների մասնաճյուղերի քանակ:</li> <li>3. Միջազգային գիտական համատեղ հրապարակումների քանակը՝ հանրային հատվածի հազար հետազոտողների հաշվարկով:</li> <li>4. Պետական դրամաշնորհային մրցութային ծրագրերում օտարերկրյա գիտնականների մասնակցության թվաքանակ:</li> <li>5. Փորձագետների շտեմարանում միջազգային փորձագետների թվաքանակ:</li> </ol>
<b>Նպատակ 2</b>	<b>ԵՄ և ԱԳ ծրագրերի շրջանակում տարածաշրջանային բազմակողմ համագործակցության խթանում:</b>
Միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Բազմակողմ միջազգային հետազոտական և տեխնոլոգիական ծրագրերի իրականացում:</li> <li>2. Տարածաշրջանային հետազոտական և տեխնոլոգիական ծրագրերի իրականացում:</li> <li>3. Եվրոպական և այլ միջազգային հետազոտական կազմակերպությունների, խոշորամասշտաբ միջազգային համագործակցությունների մասնակցության աջակցություն:</li> </ol>

Գնահատման ցուցանիշներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Բազմակողմ միջազգային հետազոտական և տեխնոլոգիական ծրագրերի քանակ:</li> <li>2. Տարածաշրջանային հետազոտական և տեխնոլոգիական ծրագրերի քանակ:</li> <li>3. Միջազգային հետազոտական կազմակերպությունների, խոշորամասշտաբ համագործակցությունների մասնակցության քանակ:</li> </ol>
-----------------------	--

#### **IV. ԱՄՓՈՓՈՒՄ**

10. ԵՀՏ գերակայությունների շրջանակներում ՀՀ ՀևՄ բնագավառի նպատակների ձեռքբերման արդյունքում հնարավոր կլինի ստեղծել միջազգայնորեն մրցունակ, ԵՀՏ-ում ինտեգրված, գիտության և տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից չափանիշներին համապատասխան, հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններում գերազանցությունը խթանող, արդյունավետ, կայուն զարգացող և ԵՀՏ-ում խելացի մասնագիտացման տիրույթ ունեցող ազգային գիտահետազոտական համակարգ: